ամրոցը, ապաստարան բերդը, դանձարանը, կանանոցը եւ մանկանոցը այս աշխարհում։ Ամէն մի արտակարգ յարձակումների, ձախորդութիւնների, վտանգի դէպքում նա ապաստանել է իր Ճորոխի Աւազանում ունեցած ամրոցում, ոյժերը հաւաքելու, վերակազմելու եւ դուրս չի եկել, մինչեւ որ աղէտը, սպառնալիքը չի անհետացել երկրից. կամ մինչեւ որ նոր ուժերով կազմակերպուած՝ խիզախել, դնացել է երկրից դուրս արել անկոչ յարձակուող բռնաւորներին։ Այս պարագան նկատելի է ինչպէս պատմական, նոյնպէս Ուրարտա-Ասորական եւ նրանից վաղ շրջաններում։

Ճորոխի Աւազանում ձորերի եւ բարձունքների վրայ կանգնած կիսաւեր եւ աւերակ բազմաթիւ բերդերն ու ամրոցները, տոհմական հանգստարանները եւ դոլմէնները մեզ ասում են, որ այս երկիրն ունեցել է իր նախնական բարբարոս, քաղաքակրթական զարգացման բոլոր շրջանները։ Քարային շրջանից մնացորդ որձաքարից, դայլախազից շինուած սուր, դաշոյն, նետի ու նիզակի ծայրի ժանիքաւոր սլաքները, ոսկորից, եղջիւրից շինուած գործիքները, քարի մուրճեր, փետաներ, կացիններ, կոպիտ տաշուած ու յղկուած ձեւերով, պարզ ձեռքով եւ ճախարակի վրայ շինուած կաւէ ամաններ, մեծամեծ կարասները ցոյց են տալիս, որ Ճորոխի Աւազանի բնիկները այդ